**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**08 սեպտեմբերի 2026 թվական**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 58 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը, Լևոն Հովհաննիսյանը, Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արման Լազրյանը, Արման Արդրեասյանը, Սերգեյ Հովակիմյանը, Սոնա Թևանյանը, Երևանի քաղաքապետի մամուլի քարտուղար Ջուլիետա Ազարյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Գրիգորյանը, առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը, մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետ Սևակ Մելքոնյանը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի հերթական նիստը կգումարվի 2026 թվականի հոկտեմբերի 13-ին, ժամը 10.00-ին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 8-ի նիստի օրակարգում ընդգրկված է 28 հարց, որից՝ 1-26-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N 744-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
2. Երևան քաղաքում Արմենուհի Տիգրանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի Շահումյան 4-րդ փողոցն անվանափոխելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքում Հրաչուհի Ջինանյանի անվամբ պուրակ անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքում Գուրգեն Դալիբալթայանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
6. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շահումյան փողոցի հ.2 հասցեում շինարարական թափոնների վերամշակման ջարդիչ կայանի կառուցման և բետոնհանգույցի վերազինման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ.Թևոսյան փողոցի հ.1/13 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 4/1 հասցեում գոյություն ունեցող պատմամշակութային շենքերի հիմնանորոգման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ.7 շենք, հ.3 բնակելի տուն և Արամի փողոց հ.7 առևտրագործարարական շենք հասցեներում՝ «Հին Երևան» թաղամասի «52»-«57» և «G»-«J» առանցքներով պարփակված հատվածամասում գտնվող շենքերի հարկերի ավելացման և վերակառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
11. Հանրապետության փողոցի հ.85 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
12. Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով «Հենակետշին» ՓԲ ընկերությանը պատկանող հողամասը Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեին կից գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
13. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

14. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
16. Վասիլ Լևսկու հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
17. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)
18. Երևան քաղաքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
19. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
21. Երևանի վարչական շրջանների սահմանները սահմանելու մասին: (Չզեկուցվող)
22. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
23. Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ. 121 շենքի հ. 55՝ 54,26 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին: (Չզեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
25. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Չզեկուցվող)
26. Երևան քաղաքում Ազատ Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
27. «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին: (Զեկուցվող)
28. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող):

Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանի կողմից առաջարկվեց չզեկուցվող բոլոր հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկություն.

Կողմ՝ 24, դեմ՝ 33, ձեռնպահ՝ 1

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանի կողմից առաջարկվեց չզեկուցվող 18-րդ՝ «Երևան քաղաքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկություն.

Կողմ՝ 26, դեմ՝ 29, ձեռնպահ՝ 3

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանի կողմից առաջարկվեց չզեկուցվող 18-րդ՝ «Երևան քաղաքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» և 19-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկություն.

Կողմ՝ 25, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 2

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանի կողմից առաջարկվեց զեկուցվող 28-րդ՝ «Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին» հարցը դարձնել չզեկուցվող:

Քվեարկություն.

Կողմ՝ 21, դեմ՝ 27, ձեռնպահ՝ 9

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանը հայտնեց, որ իր ներկայացրած՝ օրակարգի չզեկուցվող 25-րդ՝ «Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին» հարցը Երևանի ավագանու գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից ստացել է բացասական եզրակացություն և առաջարկեց հարցը հանել օրակարգից:

Առաջարկությունն ընդունվեց և քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2026թ. սեպտեմբերի 8-ի նիստի օրակարգը.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N 744-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
2. Երևան քաղաքում Արմենուհի Տիգրանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի Շահումյան 4-րդ փողոցն անվանափոխելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքում Հրաչուհի Ջինանյանի անվամբ պուրակ անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքում Գուրգեն Դալիբալթայանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
6. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շահումյան փողոցի հ.2 հասցեում շինարարական թափոնների վերամշակման ջարդիչ կայանի կառուցման և բետոնհանգույցի վերազինման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ.Թևոսյան փողոցի հ.1/13 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող

գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

9. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 4/1 հասցեում գոյություն ունեցող պատմամշակութային շենքերի հիմնանորոգման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

10. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ.7 շենք, հ.3 բնակելի տուն և Արամի փողոց հ.7 առևտրագործարարական շենք հասցեներում՝ «Հին Երևան» թաղամասի «52»-«57» և «G»-«J» առանցքներով պարփակված հատվածամասում գտնվող շենքերի հարկերի ավելացման և վերակառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

11. Հանրապետության փողոցի հ.85 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)

12. Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով «Հենակետշին» ՓԲ ընկերությանը պատկանող հողամասը Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեին կից գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)

13. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Զեկուցվող)

14. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Զեկուցվող)

15. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

16. Վասիլ Լևսկու հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)

17. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)

18. Երևան քաղաքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)

19. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

20. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

21. Երևանի վարչական շրջանների սահմանները սահմանելու մասին: (Զեկուցվող)

22. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)

23. Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ. 121 շենքի հ. 55՝ 54,26 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին: (Զեկուցվող)

24. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

25. Երևան քաղաքում Ազատ Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
26. «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին: (Զեկուցվող)
27. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող):

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 1-ից 25-րդ հարցերը:

**1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N 744-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի «Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» N 744-Ն որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2.Երևան քաղաքի Արաբկիրի 41-րդ փողոցն անվանափոխել ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Նորայր Մուշեղյանի անվամբ՝ «Նորայր Մուշեղյան փողոց»»:

**2. Երևան քաղաքում Արմենուհի Տիգրանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթ 14-րդ փողոցը (սկսվում է Արշակունյաց պողոտայից՝ Ներքին Շենգավիթի 15-րդ փողոց չհասած ընդհատվում, այնուհետև շարունակվում և հասնում Ներքին Շենգավիթի 6-րդ փողոց)՝ նրբանցքներով անվանակոչել բանաստեղծուհի, գրաքննադատ, հրապարակախոս Արմենուհի Տիգրանյանի անվամբ՝ «Արմենուհի Տիգրանյան փողոց», «Արմենուհի Տիգրանյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է Ներքին Շենգավիթի 14-րդ փողոցից՝ հասնում Ներքին Շենգավիթի 13-րդ փողոց), «Արմենուհի Տիգրանյան փողոց, 2-րդ նրբանցքը» (սկսվում է Ներքին Շենգավիթի 14-րդ փողոցից՝ հասնում Ներքին Շենգավիթի 16-րդ փողոց):

**3. Երևան քաղաքի Շահումյան 4-րդ փողոցն անվանափոխելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյան 4-րդ փողոցը՝ նրբանցքներով, անվանափոխել հայ արվեստագետ և գեղանկարիչ Կարեն Սմբատյանի անվամբ՝ «Կարեն Սմբատյան փողոց» (սկսվում է Սեբաստիայի փողոցից, հասնում՝ Առնո Բաբաջանյան փողոց), «Կարեն Սմբատյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է h.33 և h.35 շենքերի մոտից, հասնում՝ Եռաբլրի ստորոտ), «Կարեն Սմբատյան փողոց, 2-րդ նրբանցք» (սկսվում է h.57 և h.01-007-0436-0033 կադաստրային ծածկագրով գույքերից, հասնում՝ Եռաբլրի ստորոտ), «Կարեն Սմբատյան փողոց, 3-րդ նրբանցք» (զուգահեռ է 2-րդ նրբանցքին):

**4. Երևան քաղաքում Հրաչուհի Ջինանյանի անվամբ պուրակ անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Չարենցի փողոցի h.40 հասցեի և Երևանի h.8 մանկապարտեզի հարակից պուրակն անվանակոչել դերասանուհի, հաղորդավարուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Հրաչուհի Ջինանյանի անվամբ՝ «Հրաչուհի Ջինանյանի անվան պուրակ»:

**5. Երևան քաղաքում Գուրգեն Դալիբալթայանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 1-ին փողոցը (սկսվում է Բեկնազարյան, Մելքումովի և Ֆուչիկի փողոցների խաչմերուկից, հասնում Դավթաշենի 10-րդ փողոց), Դավթաշենի 1-ին փողոց, 1-ին նրբանցքը (սկսվում է Դավթաշենի 1-ին փողոցից, հասնում Աշտարակի խճուղի), Դավթաշենի 1-ին փողոց, 2-րդ նրբանցքն (սկսվում է Դավթաշենի 1-ին փողոցից, հասնում Յուրի Երզնկյան փողոց) անվանակոչել խորհրդային և հայ ռազմական գործիչ, Հայաստանի ազգային հերոս, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի անվամբ՝ «Գուրգեն Դալիբալթայան փողոց», «Գուրգեն Դալիբալթայան փողոց, 1-ին նրբանցք», «Գուրգեն Դալիբալթայան փողոց, 2-րդ նրբանցք»:

**6. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և գույքի ձեռքբերում» ծրագրով ձեռք բերված 76,000,000 (յոթանասունվեց միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թվով 8 (ութ) հատ 3 տվիչով թվային ուլտրաձայնային համակարգերը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Երևանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններին՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել Երևանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների հետ նվիրատվության պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի կնքումը:

**7. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շահումյան փողոցի հ.2 հասցեում շինարարական թափոնների վերամշակման ջարդիչ կայանի կառուցման և բետոնհանգույցի վերազինման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շահումյան փողոցի հ. 2 հասցեում շինարարական թափոնների վերամշակման ջարդիչ կայանի կառուցման և բետոնհանգույցի վերազինման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**8. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ.Թևոսյան փողոցի հ.1/13 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Ժիրայր Ավետիսյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ. Թևոսյան փողոցի հ. 1/13 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**9. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 4/1 հասցեում գոյություն ունեցող պատմամշակութային շենքերի հիմնանորոգման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ԷՌ ԷՆ ԷՍ ԱՐՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 4/1 հասցեում գոյություն ունեցող պատմամշակութային

շենքերի հիմնանորոգման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**10. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ.7 շենք, հ.3 բնակելի տուն և Արամի փողոց հ.7 առևտրագործարարական շենք հասցեներում՝ «Հին Երևան» թաղամասի «52»-«57» և «G»-«J» առանցքներով պարփակված հատվածամասում գտնվող շենքերի հարկերի ավելացման և վերակառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Լուսինե Խրանյանի լիազոր անձ՝ Արթուր Գևորգյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ. 7 շենք, հ. 3 բնակելի տուն և Արամի փողոց հ. 7 առևտրագործարարական շենք հասցեներում՝ «Հին Երևան» թաղամասի «52»-«57» և «G»-«J» առանցքներով պարփակված հատվածամասում գտնվող շենքերի հարկերի ավելացման և վերակառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**11.Հանրապետության փողոցի հ.85 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի, Հանրապետության փողոցի հ.85 հասցեում գտնվող «Պրեմիում Պլազա» ՓԲԸ սեփականության իրավունքով պատկանող 0.0343 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

**12. Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով «Հենակետշին» ՓԲ ընկերությանը պատկանող հողամասը Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեին կից գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ «Հենակետշին» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Ծիծեռնակաբերդի խճուղու հ.2/7 հասցեում /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 06042026-01-0194 վկայական/ տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1211.0քմ մակերեսով հողամասը (01-006-0619-0050 կադաստրային ծածկագիր) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեին կից և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1211.0քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

**13. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.06.2016թ. հ.15062016-01-0145 վկայական) Եղ.Թադևոսյանի փողոցի հ.2/1 հասցեում գտնվող ընդհանուր 1030.59քմ մակերեսով (հասարակական շինություններ՝ 856.94քմ և 147.39քմ, ծածկ՝ 26.26քմ) շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2029 թվականի հոկտեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

**14. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 13.12.2006թ. հ.2163423 վկայական) Հ.Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող 933.52քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2029 թվականի հոկտեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

**15. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N463-Ն որոշման 1-ին կետով

հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 81-127-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

**16. Վասիլ Լևսկու հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն պայքարի և համերաշխության խորհրդանիշ, բուլղարացի ազգային հերոս Վասիլ Լևսկու հուշարձանի տեղադրմանը Երևան քաղաքի Վահագն Դավթյանի անվան զբոսայգում՝ համաձայն հավելվածի:

**17. Գույքի նվիրատվության մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի քաղաքապետարանի կողմից՝ 27360000 (քսանյոթ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ արժեքով ձեռք բերված թվով մեկ հատ 2026 թվականի արտադրության FOTON e TOANO մակնիշի էլեկտրական մեքենան սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ին:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

**18. Երևան քաղաքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝

1) Եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր՝ համաձայն N1 հավելվածի.

2) Վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Վարչական և ֆոնդային մասերի հատկացումների կատարումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորումը ըստ աղբյուրների՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N 7 հավելվածի:

**19. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 483-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

**20. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում «12-րդ հոդվածի» բառերը փոխարինել «8-րդ հոդվածի» բառերով.

2) Որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) ամբողջ տեքստում «աշխատակազմի քարտուղար» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

3) Հավելվածի 18-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ավագանու նիստերի օրակարգը նիստից առնվազն երկու շաբաթ առաջ կազմում և հաստատում է Քաղաքապետը:».

4) Հավելվածի 23-րդ կետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անհետաձգելի համարվող նախագիծը հեղինակի կողմից կարող է լրամշակվել և ներկայացվել նիստը վարողին մինչև նշված հարցի քվեարկությունը:».

5) Հավելվածի 71-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) նիստը վարողը հրապարակում է նիստին ներկա Ավագանու անդամների թվաքանակը: Եթե գրանցված ավագանու անդամների թիվը նիստի իրավազորության համար բավարար չէ, ապա գրանցումը շարունակվում է մինչև անհրաժեշտ թվով ավագանու անդամների գրանցվելը, բայց ոչ ավելի, քան երկու ժամ: Նշված ժամկետում նիստի իրավազորության ապահովման դեպքում նիստը վարողն ավագանու անդամներին տեղեկացնում է նիստը սկսվելու մասին, իսկ չապահովման դեպքում հերթական կամ արտահերթ նիստերը համարվում են չկայացած.».

6) Հավելվածի 71-րդ կետի 3-րդ ենթակետում «օրակարգի նախագիծը» բառերը փոխարինել «օրակարգը» բառով.

7) Հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետում «հերթական նիստի օրակարգի հաստատումից» բառերը փոխարինել «առաջարկությունների քննարկումից» բառերով:

**21. Երևանի վարչական շրջանների սահմանները սահմանելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Սահմանել Երևանի վարչական շրջանների սահմանները համաձայն՝ հավելվածի:

**22. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ 2026 թվականի ընթացքում, հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**23. Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց h.121 շենքի h.55՝ 54,26 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց h. 121 շենքի h.55՝ 54,26 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 17.02. 2025թ. h. 17022025-01-0440 վկայական) անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Մարինե Գևորգի Վարդանյանին, Լիանա Սեդրակի Բոյախչյանին և Արարատ Սեդրակի Բոյախչյանին:

**24. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 463-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող շենքերը և շինությունները, առանց Երևան քաղաքի ավագանու նախնական համաձայնության, Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են քանդվել (ապամոնտաժվել), եթե դրանց քանդումը (ապամոնտաժումը) իրականացվում է հանրային անվտանգության ապահովման նպատակով կամ պայմանավորված է քաղաքաշինական ծրագրերի իրականացման անհրաժեշտությամբ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմամբ:»:

**25. Երևան քաղաքում Ազատ Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթ 13-րդ փողոցն (սկսվում է Արմեն Խոստիկյան փողոցի 1-ին նրբանցքից, հասնում Շիրակի փողոց) անվանակոչել հայ դերասան Ազատ Գասպարյանի անվամբ՝ «Ազատ Գասպարյան փողոց», Ազատ Գասպարյան փողոցից սկսվող և հ.01-011-0336-0047 կադաստրային ծածկագրով գույք հասնող՝ հ.01-011-1592-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածը՝ «Ազատ Գասպարյան փողոց, 1-ին փակուղի», Ազատ Գասպարյան փողոցից սկսվող և հ.01-011-0336-0050 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածը՝ «Ազատ Գասպարյան փողոց, 2-րդ փակուղի», Ազատ Գասպարյան փողոցից սկսվող և Ազատ Գասպարյան փողոցի 2-րդ փակուղու հարակից հատված հասնող ճանապարհահատվածը՝ «Ազատ Գասպարյան փողոց, 3-րդ փակուղի»:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 36, դեմ՝ 13, ձեռնպահ՝ 9

Որոշումներն ընդունվել են ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2026 թվականի սեպտեմբերի 8-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

**26.«Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից ««Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ -** Հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 17 անդամ.

1. Անի Խաչատրյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար,
2. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
3. Ռոբերտ Ծովյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
4. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար,
5. Ալբերտ Մովսիսյան – Երևանի ավագանու անդամ,
6. Արման Բաբաջանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,

7. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
8. Հայկ Միրզոյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
9. Իոսիֆ Կուբատյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
10. Հայկ Սահակյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ,
11. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
12. Դիանա Քերոբյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
13. Արմեն Գալջյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար,
14. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
15. Արամ Թորոսյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,
16. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար,
17. Արմեն Քոչարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Գրիգորյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ –** Ելույթների համար գրանցվել է ավագանու 14 անդամ.

1. Հայկ Միրզոյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
2. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
3. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
4. Իոսիֆ Կուբատյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
5. Աշոտ Սարգսյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
6. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար,

7. Հայկ Սահակյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ,

8. Արմեն Գալջյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար,

9. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,

10. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,

11. Դիանա Քերոբյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,

12. Խորեն Հովհաննիսյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,

13. Քրիստինե Վարդանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,

14. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

**ՈՐՈՇՎԵՑ –** 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի ենթակայության «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ 0078, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Քըրք Քըրքորյան փ. 16, պետական գրանցման համարը՝ 222.120.00113):

2. Երևանի քաղաքապետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով.

2) ապահովել լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի հաստատումը:

3. Լուծարման գործընթացի ընթացքում՝ «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության պարտատերերի պահանջը բավարարելուց հետո, մնացած գույքը և գույքային իրավունքները հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 42, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 14

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

**27. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ -** Հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 6 անդամ.

1. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար,
2. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
3. Արման Բաբաջանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
4. Ռոբերտ Ծովյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
5. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
6. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ –** Ելույթների համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար,
2. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,
3. Արմեն Գալջյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար,
4. Հայկ Սահակյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը և Երևանի ավագանու

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

**ՈՐՈՇՎԵՑ –** 1. Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող 246,342,131.64 (երկու հարյուր քառասունվեց միլիոն երեք հարյուր քառասուներկու հազար հարյուր երեսունմեկ դրամ վաթսունչորս լումա) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գետառ գետի վրա (վերջնամասում) ու կից տարածքում կառուցված կեղտաջրերի մաքրման կայանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Կազմեց՝
Լ. Ալոյան